Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 110 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 263- Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանության «Grassroots» մշակութային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀԲԸՄ հիմնադրամը (Հայաստան) արժանացել է դրամաշնորհի, համաձայն որի Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնի վերազինման համար ձեռք են բերվելու թանգարանային նմուշների վերականգնման և պահպանման նոր սարքավորումներ, որոնք նվիրաբերվելու են Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցուն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանություն
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) հիմնադրամ (Հայաստան) (ՀՀ, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02636688)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղ. Էջմիածին բնագավառը՝ մշակույթ
6.	Ծրագրի բյուջեն	35,700,000 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցի, (ՀՀ. քաղ. Էջմիածին, ՀՎՀՀ՝ 04703401)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինան-սական միջոցների ծավալը	Դրամաշնորհի շրջանակներում՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի թանգարանների պահպանման կենտրոնի վերազինման նպատակով, իրականացվելու են ստորև նշված միջոցառումները՝ 1. Անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում Հայաստանի տարածքում: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 1,704,584 դրամի չափով: 2. Անհրաժեշտ սարքավորումների ներմուծում: Նախատեսվում է իրականացնել 2023 թվականի ապրիլի 20-ից մինչև 2024 թվականի փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում՝ 33,345,416 դրամի չափով: 3. Ծրագրի իրականացման աուդիտորական ծառայություններ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի փետրվարի 1-ից մինչև 2024 թվականի մարտի 29-ն ընկած ժամանակահատվածում՝ 650,000 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Սարքավորումների ձեռքբերում՝ 1,704,584 դրամ՝ առանց ԱԱՀ: 2. Սարքավորումների ներմուծում՝ 33,345,416 դրամ՝ առանց ԱԱՀ: 3. Ծրագրի իրականացման աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 650,000 դրամ՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսվում են աուդիտորական ծառայություններ՝ ծրագրի իրականացման հետ կապված:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակա-ռավարման մարմինների և այլ մարմինների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ